ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

« *ՌՖԷԻ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18 /20* » ծածկագրով Մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Ք. Աշտարակ «30» «հոկտեմբերի» 2018թ.

ժ 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վահան Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Զորյան Նվարդ, և Անի Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վեներա Բալասանյան

1. **«*ՌՖԷԻ-ՀՄԱ-ԱՊՁԲ- 18 /20*» ծածկագրով Մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.**

1.1 Հաշվի առնելով *ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ ՊՈԱԿ-ի* կողմից Հատուկ օպտիկական գործիքներ՝ տեսանելի և ինֆրակարմիր օպտիկական տիրույթների դիտարկման ձեռք բերելու համար հայտարարված « *ՌՖԷԻ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18 /20* » ծածկագրով Մեկ Անձից գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարության եզրակացությունն այն մասին, որ նշված ծածկագրով մրցույթի առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ «ԱՐԱԳԱԾ »ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների չափը կազմում է 248.946 հազար ՀՀ դրամ, որը գերազանցում է ՀՀ Գնումների մասին օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ սահմանված ժամկետանց պարտավորություններ չափը: Ուստի գնահատող հանձանաժողովը որոշեց « *ՌՖԷԻ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18 /20* » ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված հարցման արդյունքները:

1.2 Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ Գնումների մասին օրենքի 37 հոդված 4 կետի համաձայն « *ՌՖԷԻ-ՀՄԱ-ԱՊՁԲ- 18 /20* » ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած

Ծանուցել «ԱՐԱԳԱԾ »ՍՊԸ-ին մինչև նոյեմբերի 2-ը ժամը 14 :00 ներառյալ ներկայացնել ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ ՊՈԱԿ-ին օրենքով նախատեսված փաստաթղթերը՝ սև ցուցակի մեջ ներառվելու գործընթացը կասեցնելու նպատակով :

Նիստին ներկա հանձանժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վ. Վարդանյան

Անդամներ՝ _____ Ն. Զորյան

_____ Ա. Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Վ. Բալասանյան